ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԸ*

Ուրարտական պետության կազմավորումը տեղի է ունեցել երեք փուլերով, որոնցից վերջինը ունեցել է երեք ենթափուլեր:

Ուրարտական պետության կազմավորման առաջին փուլը, որը համընկնում է այդ պետության պաշտերացման առաջին փուլին, վերաբերվել է ուրարտական և հայկական ցեղերի որոշ մասի միավորմանը մի ընդհանուր, կենտրոնական պետության կազմում (հայկական ցեղերը այդ ժամանակ տարածված էին Արամալի վարչական միավորի կազմում, ինչպես նաև նրա հիմքի վրա ձևավորված հետագա Արմարիլի-Արմարիյալի կամ Արմիրալի մարզում): Այդ փուլում ուրարտական պետության գրաված տարածքը սկսվել է Արածանի գետի միջին ավազանի հարավային սահմաններից, ձգվել Վանա լճի արևելյան երկարությամբ և տարածվել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը[1]: Այդ փուլում, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, ուրարտական պետությունը կազմված էր 4 քաղաք-ամրոցներից և նրանց շրջակայքի բնակավայրերից: Մի քաղաք-ամրոցը իր շրջակայքի բնակավայրերի հետ կազմել էր երկրի մի վարչական միավորը: Այդ վարչական միավորներն էին՝ Արզաշքուն, Արամալին, Զանզիուանա և Սուգունիան: Դրանցից Արզաշքուն տարածված էր երկրի հյուսիսային մասում, մասնավորապես Վանա լճի և Արածանիի միջև ընկած տարածքում, Արամալին՝ Վանա լճի արևելյան մասում, Զանզիուանա՝ այդ լճի հարավ-արևելքում, իսկ նրանից արևելք դեպի Ուրմիա լճի արևմտյան կողմը տարածված էր Սուգունիան[2]: Հյուսիսային կողմում Ուրարտուին սահմանակից են եղել Դայաենի-Դիաուխի, Թումմե, Սուխմու և Էնզիտե երկրները, հարավային և հարավ-արևելյան կողմում՝ Գիլզանի, Խուրուշքիա և Մուծծիր երկրները (նշված երկրներից Դայաենի-Դիաուխին անմիջապես սահմանակից

---

* Հոդվածը հրատարակվում է առանց նրա էությանը խմբագրության կողմից միջամտության:

է եղել Արզաշքուի շրջանին, Մուծաձիրը և Խուբուշքիան՝ Սուգունիայի շրջանին, իսկ Գիլզանին՝ Զանզիանայի շրջանին)[3]: Առաջին փուլում Ուրարտուն չի ունեցել խոշոր զորք: Նրա զինվորների թիվը հասել է 3400-ի[4]: Այդ զորքը ենթարկվել է երկրի արքային: Այն կոչվել է արքայի զորք կամ արքայական զունդ, որը արքայի հետ գտնվել է երկրի արքայական քաղաքում, իսկ անհրաժեշտության դեպքում պաշտպանել է երկրի սահմանները: Սուգունիա վարչական միավորի օրինակը ցույց է տալիս, որ զորք են ունեցել նաև վարչական միավորները, մասնավորապես նրանց քաղաք-ամրոցները[5]: Երկրի առաջին արքան է եղել Արամեն (859-832), իսկ նրա արքայական քաղաքը՝ Արգաշքուն[6]: Այդ փուլում ասսուրական պետությունը մի քանի անգամ կործանարար արշավանքներ է կազմակերպել նորաստեղծ ուրարտական պետության վրա, բայց վերջինս կենաց ու մահու պայքարի գնով պաշտպանել է իր գոյությունը: Ասսուրական արշավանքները աստիճանաբար դադարել են, երբ մ.թ.ա. 832 թ. ուրարտական թագավորներից Սարդուրի I-ը (832-822) Արածանի գետի ափին լուրջ դիմադրություն է ցույց տալիս ասսուրական զորքին, կանխում նրա ներթափանցումը Ուրարտու[8], երկիրը փրկում ասսուրական զորքի նոր ասպատակություններից ու ավերածություններից:

Ուրարտուն, երբ նոր է քաղաքական ասպարեզ եկել, բացի վերոհիշյալ երկրներից, շրջապատված է եղել նաև ցեղամիություններով: Նրա հյուսիս-արևմտյան կողմում գտնվել է Խաթե ցեղամիությունը[9], իսկ հյուսիս-արևելյան կողմում՝ Էթիունի ցեղամիությունը[10]: Այդ երկու ցեղամիությունները իրարից բաժանվել են Դուլյաեենի-Դիաուխի պետության ընդարձակ տարածքով[11]:

Ուրարտական պետության կազմավորման երկրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության պարբերացման վերելքի փուլին, սկսվել է Իշպուինիի (822-810) ժամանակաշրջանից: Հզոր Ասորեստանի դեմ պայքարելու նպատակով ուրարտական պետությունը աշխատել է իր գերիշխանության տակ վերցնել շրջակայքում գտնվող երկրները, հարստացայ ու հզորանալ նրանց միջոցներով և վերջ տալ ասսուրական սպառնալիքներին: Բայց դա խաղաղ ճանապարհով տեղի չէր ունենալու: Դրա համար հարկավոր էին նվաճումներ: Եվ սկսվում են ուրարտական նվաճողական արշավանքները շրջակայքի անհատ-անհատ ցեղային երկրների, ցեղամիությունների ու պետության աստիճանի հասած երկրների վրա:

Իշպուինին, հյուսիս-արևելքում նվաճելով Ուիտերուխի, Լուշա, Քաթարզա ցեղային երկրները, Ուրարտուի սահմանները հասցնում է մինչև Արածանի ու Արաքս գետերի ակունքները[12], նվաճելով Արաքսի ձախ ափին գտնվող Պուլուադի երկիրը (Սյունիք նահանգի Երնջակ գավառում, որը հետագայում մտել է Նախիջևանի կազմի մեջ), ինչպես նաև Բարշուա կամ Պարոսուաշ (հմմտ. Պարսկաստան) երկիրը, Ուրարտուի սահ-

մաններայր հասցնում է մինչև Արաքսի միջին ավազանը և Ուրմիա լճի արևելյան կալմերը[13]:

Մենուան (810-786) իր նվաճումներով Ուրարտուի հյուսիսային սահմանները հասցնում է մինչև Դայաենի-Դիաուխի ընդարձակածավալ պետության կենտրոնական որոշ տարածքները[14], հյուսիս-արևմտյան սահմանները՝ մինչև Ծուպանի (Ծոփք) երկիրը և Խաթե ցեղամիության արևելյան սահմանները (Փոքր Հայքի Մելաս գետի ավազանում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էրիքուախի երկիրը (Արարատյան դաշտավայրի մատույցներում, Արարատ լեռան ստորոտում)[15], արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Մելիտեա կամ Մելիդու (Մելաթիա) երկիրը[16], հարավային սահմանները՝ մինչև Ծուբրիա և Ուրմե երկրները (Սասունի լեռնային զանգվածում)[17], հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Մանա երկիրը (Ուրմիա լճի արևելքում)[18]:

Արգիշթի I-ը (786-764) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Դայաենի-Դիաուխի պետության ծայր հյուսիսային կողմերը (Սև ծովի հարավային ափերին)[19], հյուսիս-արևմտյան սահմանը՝ մինչև Խաթե ցեղամիությունը (Փոքր Հայքում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էթիունի ցեղամիությունը, մասնավորապես նրա մեջ մտնող Կիեխունի երկիրը (Սևանի ավազանում, իհարկե, ճանապարհին նվաճելով Ազա(հմմտ. Ուազա, Վազա) երկիրը (Արարատյան դաշտավայրում) և Ուլուսնի երկիրը (Կստուայքում)[20], հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Բալուաթա, Բուշթու և Բաբիլու երկրները (Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք[21]):

Սարդուրի II-ը (764-735) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Կուլխաս (Կոլխիդա) երկիրը (Սև ծովի հարավ-արևելքում)[22], հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էթիունի ցեղամիության մասը կազմող Ու(ե)դուրի-Էթիունիի մեջ մտնող Ադախունի, Վելիքունի (Գեղաքունի), Լուերունի, Արքուքինի երկրները (Սևանա լճի ավազանում) և Ուրտեխինի (հմմտ. Արցախ) երկիրը[23], արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Կումախաս (Կոմագենե) երկիրը[24], հարավային սահմանները՝ մինչև Արմե երկիրը (Սասունի լեռնային զանգվածում)[25], նվաճում է նաև Պուլուադի երկրի հարավային կողմերը (ժամանակակից Իրանի հյուսիսային շրջաններում, Արաքսից դեպի հարավ):

Այդ նվաճումների հետևանքով ուրարտական պետությունը հզորանում է, որի շնորհիվ աճում է նրա հեղինակությունը արտաքին աշխարհում, և Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական առաջնությունը Ասորեստանից անցնում է Ուրարտուին:

Սարդուրի II-ը կազմակերպում է նաև հակա-ասորեստանյան կոալիցիա, որի մեջ են մտնում ինչպես հյուսիսային Սիրիայի Բիթ-Ագուսի և Գուրգում, այնպես էլ անդրեփրատյան Կումմուխսու կամ Կումախա (Կո-

մագենե) և Մելիտեա-Մելիդու (Մալաթիա) երկրները[26]: Սարդուրի II-ի նպատակն էր՝ կոալիցիոն բանակով հարձակվել անմիջապես Ասորեստանի վրա, ծնկի բերել նրան, ընդմիշտ վերացնել հարավից սպառնացող վտանգը: Իբրև դրա ապացույց պետք է նկատի ունենալ այն փաստը, որ նա մ.թ.ա. 753 թվականին հարձակվում է Ասորեստանի թագավոր Աշշուրնիրարի III-ի (753-746) վրա և պարտության մատնում նրան[27]: Դրանից հետո, ինչպես կհամոզվենք հետագա շարադրանքում, Սարդուրի II-ը իր կոալիցիոն բանակով ամրանում է Քիթ-Ագուսի և Կոմմուխու երկրներում՝ անշուշտ Ասորեստանի վրա նոր հարձակումներ կազմակերպելու նպատակով:

Իր կազմավորման երկրորդ փուլում ուրարտական պետությունը նվաճել է շուրջ 130 խոշոր և մանր երկրներ:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության պարբերացման վայրէջքի փուլին, ինչպես ասվել է վերևում, ունեցել է իր երեք ենթափուլերը: Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի առաջին ենթափուլը սկսվում է Սարդուրի II-ի կառավարման երկրորդ շրջանից: Ասատրական պետությունը, զգալով Ուրարտուի նպատակները, նախապատրաստվում է դիմակայելու նրա հետագա գործողություններին: Դրան հատկապես ձեռնամուխ է լինում ասորական գահին նոր անցած Թիգլաթպալասար III-ը (745-722), որը իր թագավորության երրորդ տարում՝ մ.թ.ա. 743 թ. հյուսիսային Սիրիայում գտնվող Քիթ-Ագուսի երկրի Արպադ քաղաքի մոտ, որտեղ արդեն թափանցել էր Ուրարտուն, մարտեր մղելով Սարդուրի II-ի դեմ, հաղթանակի է հասնում[28]: Հետագայում լարվածությունը ավելի է սրվում Ասորեստանի և Ուրարտուի միջև, որը ավարտվում է մ.թ.ա. 735 թվականին Կոմմուխու (Կոմմագենե) երկրի Կիշքեան և Խալպու մարզերի սահմանում, մասնավորապես Կիշքան քաղաքի մոտ տեղի ունեցող ճակատամարտով, որի ընթացքում հաղթանակը դարձյալ ուղեկցում է Թիգլաթպալասար III-ին: Դրանից հետո նա մտնում է Ուրարտու, պաշարում նրա արքայական Տուշպա (Տուսուշպա) քաղաքը, ուր փակված էր Սարդուրի II-ը և ասպատակում երկրին[29]: Դրա հետևանքով քայքայվում է ուրարտական պետության կողմից ստեղծված հակա-ասորեստանյան կոալիցիան: Թիգլաթպալասար III-ը Ուրարտուից խլում է նրա հարավում գտնվող Ուլլուբա երկիրը, Սասունի լեռնային զանգվածի հարավային մասում գտնվող Շուբրիա երկրի Քուլիմմերի (Քոիմար) մարզը (Քալամա կամ Քալիրթ գետի ավազանում) և նրա շրջակայքում գտնվող մի շարք բնակավայրերը, այդ թվում Բենզու, Անգանու և Սարդուրի քաղաքները, իրեն հարկատու է դարձնում մինչ այդ Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող Քիթ-Ագուսի, Գուրգում(ու), Մելիտեա կամ Մելիդու (Մալաթիա), Կոմմուխու կամ Կոմմախա (Կոմագենի) երկրները[30]: Արտաքին աշխարհում Ուրարտուն կորցնում է իր քաղաքական

հեղինակությունը, ե Առաջավոր Ասիայում առաջնությունը կրկին անցնում է Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է վայրէջքի ճանապարհ:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ վուլի երկրորդ ենթափուլը համընկել է Ռուսա I-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Սարդուրի II-ին հաջորդող Ռուսա I-ը փորձում է փրկել արտաքին աշխարհում իր երկրի կորցրած հեղինակությունը և Ասորեստանից ետ խլել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Դրա համար անհրաժեշտ էին տնտեսական նոր աղբյուրներ: Սակայն Ասորեստանի ազդեցությունը հնարավորություն չէր տալիս նրան անմիջապես դիմել արշավանքների հարավում գտնվող հարուստ երկրների վրա, նրանցից ձեռք բերել ավար, ռազմագերիներ, հարկ ու տուրք: Ռուսա I-ին միայն հաջողվում է Մանա երկրից խլել նրա Ուիշդիշ մարգը և միացնել Ուրարտուին[31]: Ուրարտուի թիրախում մնում են հիմնականում հյուսիսի երկրները, որոնք այնքան էլ հարուստ չէին: Նա նվաճում է Սևանա լճից այն կողմ, բարձր լեռների վրա (Փոքր Կովկասում) գտնվող 19 երկրները[32], բայց այդտեղից ռազմավար ձեռք չի բերում: Ռուսա I-ը ստիպված նյութական միջոցներ է փնտրում սեփական երկրի ներսում՝ զարգացնելով նրա տնտեսության ճյուղերը: Այդ ասպարեզում նա հասնում է որոշ հաջողության[33]: Դրանից ոգևորված նա հարավ-արևելքում ստեղծում է հակա-ասսուրական երկրների կոալիցիա, որի մեջ են մտնում մերձկասպյան Անդիս և մերձուրմյան Զիկիրթու, Արդինի-Մուծաշիր ու Նաիրի-Խուբուշքիա երկրները[34]: Նա մարտեր է մղում Ասորեստանի դեմ նրա հյուսիսային լեռներում[35]:

Ռուսա I-ի այս ռազմական պլաններին ուշիուշով հետևում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705): Նա, զգալով Ուրարտուից սպասվող վտանգը, ինքն է նախահարձակ լինում, արշավում Ուրարտուի վրա նրա հարավ-արևելյան կողմից և Ուրմիա լճի հյուսիս-արևելքում գտնվող Ուաուշ լեռան ստորոտում տեղի ունեցող ճակատամարտում հաղթանակ տանում Ռուսա I-ի կոալիցիոն բանակի նկատմամբ, կողոպտում ու ավերում երկրի կենտրոնական մարգերը[36]: Ռուսա I-ի հույսերը չեն արդարանում: Ռուսա I-ից Սարգոն II-ը խլում է Մանա երկրից նվաճված ու ուրարտական կենտրոնական մարզերի շարքում մտցված Ուիշդիշ մարզը[37]: Նա իրեն է ենթարկում ամբողջ Մանա երկիրը, որը մինչ այդ գտնվում էր Ուրարտուի ազդեցության տակ: Սարդուրիին հարկատու են դառնում Նաիրի-Խուբուշքիա, Արդինի-Մուծաշիր, Զիկիրթու և Անդիս երկրները: Շարունակում են Ասորեստանին հարկ վճարել Մելիդուն, Կումմուխուն, Գուրգումը, Քիթ-Ազուսին: Ուրարտուից անկախանում է Շուբրիա երկիրը[38]:

Փաստորեն Ռուսա I-ի գործողությունները ոչնչով չնպաստեցին Ուրարտուի վերելքին: Ընդհակառակը, այդ գործողություններից հետո ուրարտական պետության վայրէջքը ավելի է խորանում: Բայց, այնուամե-

նայելով, նա նվաճելով Փոքր Կովկասում գտնվող 19 երկրները՝ որոշ չափով նպաստ է բերել իր պետության կազմավորման գործին:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի երրորդ ենթափուլը համընկնում է Արգիշթի II-ի և Ռուսա II-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Այս ենթափուլում Ուրարտուի հիշյալ թագավորները իրենց զգուշավոր քաղաքականությամբ հնարավորություն չեն տալիս Ասորեստանին նոր արշավանքներ գործել իրենց երկրի վրա, ավերածություններ կատարել այնտեղ և նոր երկրներ անջատել նրանից:

Ռուսա I-ին հաջորդող Արգիշթի II-ը (713-685) զբաղվում է Սարգոն II-ի կողմից ավերված երկրի վերակառուցման աշխատանքներով: Նրան միայն հաջողվում է նվաճումներ կատարել Ասորեստանից հեռու, Ուրմիա լճի հյուսիս-արևելքում (ժամանակակից Թասվրիգի ու Արդեբիլի շրջաններում): Նա նվաճում է այնտեղ գտնվող 6 երկրները, դնում հարկի տակ[39], բայց նրանցից կողոպուտ և ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում: Նա նվաճում է նաև երկրի հյուսիս-արևելքում, մասնավորապես ժամանակակից Սյունիքում գտնվող Ծուլուկու (Ծղուկ) երկիրը[40], բայց նրանից ևս կողոպուտ ու ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում, ինչպես նաև չի կարողանում այդ երկիրը դնել հարկի տակ:

Արգիշթի II-ին հաջորդող Ռուսա II-ը (685-645) նույնպես զբաղվում է երկրի ներսում շինարարական աշխատանքներով: Նրան հաջողվում է նաև արշավանքներ կազմակերպել Ասորեստանից շատ հեռու, Փոքր Ասիայում գտնվող Մուշքինի (Փռյուգիա), Խալիտու (Խաղտիք) երկրների և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում, մասնավորապես Փոքր Հույքում գտնվող Խաթե երկրի (ավելի ճիշտ Խաթե ցեղամիության) վրա[41], որը վաղուց էր նվաճվել Ուբուրտուի կողմից: Նրան չի հաջողվում այդ երկրներից ռազմավար ձեռք բերել: Նա բավարարվում է նրանով, որ այդ երկրներից ձեռք է բերում որոշ քանակությամբ կին գերիներ: Ռուսա II-ը վարձում է գրավել երկրի հարավում, Ասորեստանի սահմանի մոտ գտնվող անկախ Շուբրիա երկիրը՝ պատրվակ դարձնելով այդ երկրում ասսուրական փախստականների հետ ապաստան գտած ուրարտական փախստականներին բռնելը: Սակայն Ասորեստանի թագավոր Ասարխադդոնը (680-669), իմանալով Ռուսա II-ի այդ մտադրության մասին, ինքը նախահարձակ է լինում, գրավում Շուբրիա երկիրը[42] և մոտենում անմիջապես Ուրարտուի հարավային սահմանին: Ուրարտուն տեսնում է դա, բայց լռում է և չի հանդգնում պայքարի ելնել հզոր Ասորեստանի դեմ:

Այսպիսով, Արգիշթի II-ը և Ռուսա II-ը թեև 9 նոր երկրներ են նվաճում ու նպաստ բերում ուրարտական պետության կազմավորման գործին, բայց դրանով նրանք չեն կարողանում կանխել այդ պետության վայրէջքը և բացել նրա վերելքի ճանապարհը: Ուրարտական պետության վարէջքը շարունակվում է մինչև մթա 585թ., որից հետո սկսվում է այդ պե-

տության անկման փուլը: Ռուսա II-ից հետո վայրէջքի փուլում թագավորել են Սարդուրի III-ը (645-635) և Սարդուրի IV-Պարույրը (635-585): Վերջիններս ընդհանրապես նվաճողական արշավանքների չեն դիմում և, հետևաբար, նոր երկրներ չեն նվաճում ու ոչնչով չեն նպաստում իրենց պետության կազմավորման գործին:

Սկսած մթա 585 թվականից, երբ վայրէջքի փուլին հաջորդում է Ուրարտու կամ Արմենիա պետության պարբերացման անկման փուլը, այդ պետությունը անցնում է, նախ՝ Մեդիայի, ապա՝ Պարսկաստանի գերիշխանության տակ: Այդ գործընթացը ավարտվում է նրանով, որ Ուրարտուն կամ Արմենիան մթա 522թ. գրկվում է իր պետականությունից և վերածվում պարսկական սատրապության: Այդ փուլում Ուրարտու կամ Արմենիա պետության նոր կազմավորման մասին խոսելն ավելորդ է:

Ուրարտական պետության կազմավորման մասին տեղեկություններ ենք քաղում այդ պետության թագավորների տիտղոսաշարերից, որոնք գրվել են ինչպես ուրարտերեն, այնպես էլ ասսուրերեն լեզուներով: Ուրարտերեն լեզվով գրած ամիտղոսաշարերում Ուրարտուի թագավորները իրենց անվանել են «թագավոր երկիր շուբելիի (^{KUR}sureli), թագավոր երկիր Բիանիլիի[43]», իսկ ասսուրերեն լեզվով գրած տիտղոսաշարերում նրանք իրենց անվանել են «թագավոր քիշշաթիի (kissati), թագավոր Նաիրի երկրի[44]»: Սրանցից «Նաիրի երկիրը» փոխարեն Ռուսա I-ի երկլեզվյան արձանագրության ասսուրերեն տարբերակում հիշատակվում է «Ուրարտու երկիրը»[45]:

Ակներև է, որ Նաիրի և Ուրարտու անվանումները տրվել են բուն երկրին: Նրանց՝ երկուսին փոխարինել է Բիանիլի տերմինը, որն ունի հավաքական, հոգնակիության իմաստ (այն զուրկ է էթնիկական իմաստից, քանի որ նրա անունով ցեղ կամ ցեղամիություն չի հիշատակվել, ավելի շուտ այն ունի տեղի իմաստ: Իսկ ինչ վերաբերում է տիտղոսաշարերի ասսուրերեն տարբերակի «քիշշաթի» և ուրարտերեն տարբերակի «երկիր շուբելի» հասկացություններին, ապա դրանցից առաջինը՝ «քիշշաթին», ասսուրերեն բառ է, որը նշանակում է «տիեզերք», «աշխարհ», ինչպես նաև «բազում»[46]: Ուրարտական թագավորների տիտղոսաշարերում այդ բառը օգտագործվել է իր վերջին իմաստով՝ «բազում» իմաստով[47]: Հետևաբար Ուրարտուի թագավորների ասսուրերեն տիտղոսաշարերի «թագավոր քիշշաթի» նշանակում է «թագավոր բազմաց» կամ «թագավոր բազում երկրների»: Այդ իմաստն է պարունակում նաև ուրարտական թագավորների տիտղոսաշարերի «թագավոր երկիր շուբելիի» տիտղոսի «երկիր շուբելի» բաղադրամասը[48]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «երկիր շուբելի» (^{KUR}šureli) տերմինի KUR.KUR$^{MI.Š49}$ և $^{L.3}$KUR.KUR$^{MI.Š50}$ գաղափարագրերից առաջինը նշանակում է «բազում երկրներ», իսկ երկրորդը, որը LՅ «մարդ» սահմանիչի շնորհիվ ստացել է նաև «բնակիչներ» իմաստը, նշանակում է «բազում երկրների բնակիչ-

ներ[51]»: Այս փաստերը իրենց հերթին հաստատում են, որ «երկիր շուրեյի» տիտղոսը իրոք նշանակում է «բազում երկրներ»: Տիտղոսաշարերում այդ «երկիր բազմացը» կամ «բազում երկրները» (KL Rsureli), որոնք ենթարկվել են ուրարտական թագավորներին, տարբերվել են այդ թագավորների բուն երկրից (Նաիրիից, Ուրարտուից): Այդ «երկիր բազմացը» կամ «բազում երկրները», բնականաբար, վերաբերել են ուրարտական թագավորներին հպատակ, նրանց կողմից նվաճված երկրներին[52]:

Փաստորեն տիտղոսաշարերը ցույց են տալիս, որ ուրարտական պետության կազմավորման հիմքում ընկած են եղել ինչպես բուն երկիրը, այնպես էլ հպատակ (այդ թվում նվաճված) երկրները:

Այսպիսով, ուրարտական պետությունը կազմավորման երկրորդ փուլում նվաճել է շուրջ 130 երկրներ, իսկ երրորդ փուլում՝ ևս 28 երկրներ: Այդ 158 երկրները տարածված են եղել Ուրարտուի շրջակայքում: Ասորեստանից կրած պարտությունների հետևանքով Ուրարտուի հարավում, հարավ-արևելքում և հարավ-արևմուտքում նվաճված երկրների մեծ մասը անջատվել է նրանից: Մնացած երկրների շնորհիվ կազմավորվել է ուրարտական պետությունը: Այդ կազմավորումը տեղի է ունեցել 3 գլխավոր փուլերով:

DIMITRI SARKISYAN

THE MAIN STAGES OF FORMATION OF THE URARTIAN STATE

The formation of the state of Urartu has gone 3 main stages, the last of which has 3 understages. The first stage coincided with the political appcarance Urartu, when those state was busy uniting its native territories and population. At that time the heard of the country were the kings Arame (859-832) and Sarduri I (832-822). The second stage coincided with the progress of Urartu, when the state conqucred about 130 countries nearly and took the hegemony of Progressive Asia. At that stages great changes hade occurred in the territory and its population. At that time head of the state were the kings the Ishpuini (822-810), Menua (810-786), Argishti I (786-764) and Sarduri II (764-735). The first understage of third stages coincided with the last period of the Sarduri II kingdom, when king of Assiria Tiglatpalasar III (745-727) inwaded Urartu, defeated the country, as a result of which the stage in southern, south-estarn, south-western countries were seperated. The second understage of third stages coincided with the period of Rusa I (735-713) kingdom, when Urartu occupy 19 countries in the Small Caucas, but with a last period of Rusa I kingdom king of Assiria Sargom II (722-705) inwaded Urartu, defeated the country, as a result of which the second understage in southern countries were separeted. The third understage of the third stage coincided with the time kingdom of Urartu kings Argishti II (713-685) and Rusa II (685-645), when the above mentioned kings conquered almost 9 countries in the northern, north-eastern, north-western parts

Urartu and make new changes in the formation of their country. The next kings don't conquer any territories, and any new countries are not seperated from Urartu.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. АВИИУ, №27.
2. АВИИУ, №27 (I-23; II-45, 54).
3. АВИИУ, №№27, 28 (35), 31, 32, 33.
4. АВИИУ, №27 (II-45).
5. АВИИУ, №27 (I-23).
6. АВИИУ, №№27 (II-45), 28 (35).
7. АВИИУ, №№27, 28 (35, 141).
8. АВИИУ, №27 (141).
9. УКН, №№28 (лиц. стор. стк. 5-7); 39 (стк. 7-9), 127 (стк. 5-24, 32-37), 128, A2 (стк. 15-22), 278 (стк.1-6).
10. УКН, №№20, 127, II (стк. 25-31), V (стк. II-13, 49), 128, A2 (стк. 1-23), 130, 131, 155, A (стк. 13-21), C (стк. 49-53), F (стк. 6, II-32).
11. УКН, №№36-37, 127, I (стк. 1-22), 128, A1, B1).
12. УКН, №№20-23.
13. Վ.Ա. Իգումնով, Հ.Հ. Կարագյոզյան, Ս.Գ. Հմայակյան, Օձասարի սեպագիր արձանագրությունը (ՊԲՀ, 1997, №1), էջ 193-202; Ն.Վ. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում (ՊԲՀ, 2000, №2), էջ 196-212; УКН, №24.
14. УКН, №№36,37.
15. УКН, №№30-34.
16. УКН, №39.
17. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 5.
18. УКН, №№28-29.
19. УКН, №№127, I (стк. 1-22), 128, A1, B1.
20. УКН, №№127. III (стк. 26-30), IV (стк. 70-74), 128, B2 (стк. 40-42), A2 (стк. 4-11), 134 (стк. 3), 142.
21. УКН, №№127 III (стк. 10-71), IV (стк. 44-53), V (стк. 25), 128, B2 (стк. 15-24), 155, A (стк.4-12). (Այս երկրներից Բաբիլոն, ըստ Ի.Մ.Դյակոնովի կարծիքի, համապատասխանում է ոչ թե անմիջապես Բաբելոնին, այլ Դիյալա գետի ավազանում գտնվող Նամոու երկրին, որը այդ ժամանակ գտնվում էր Բաբելոնի գերիշխանության տակ, խիստ բաբելոնացված էր, որի պատճառով էլ ուրարտացիները կոչում են նրա անունով) (АВИИУ, №49, прим.14):
22. УКН, №155, D, (стк. 1-15).
23. УКН, №161.
24. УКН, №155, E, (стк. 36-57).
25. УКН, №156, DI+DII (DI, стк. 11-16).
26. УКН, №156, DI+DII (DI, стк. 8-10).
27. АВИИУ, №№41 (59), 42 (20), 44 (43, об. стор. 7).
28. АВИИУ, №41 (59, 83).
29. АВИИУ, №42 (20).
30. АВИИУ, №40 (43, об. стор. 7), 42 (28).

31. АВИИУ, №49 (156).
32. АВИИУ, №266, (стк. 6-19).
33. АВИИУ, №49(156-297).
34. АВИИУ, №№49 (79-91, 125-156), 54 (28-112).
35. УКН, №264 урарт. текст, стк. 17-19, ассир. текст, стк. 16-18.
36. АВИИУ, №49
37. АВИИУ, №46 (109).
38. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
39. УКН, №№445-446.
40. Н.В. Арутюнян, Новая урартская надпись из Сисиана (Древний Восток, №4, 1983), стр. 195-220.
41. УКН, №278, стк. 1-6.
42. АВИИУ, №67; Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
43. УКН, №№19, стк. 3; 364, стк. 29 (срав. 128, А4, стк. 4; 276, лиц. стор., стк. 30 и т.д.).
44. УКН, №№1-3, 319-325, стк. 1-2.
45. УКН, №264, ассир. текст, стк. 27 (срав. урарт. текст, стк. 4).
46. Л.А. Липин, Аккадский (вавилоно-ассирийский язык), словарь, вып. II, Л., 1957, стр. 105.
47. Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիլի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167, նրա՝ Ուրարտական համայնական և զինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
48 Դ.Ն.Սարգսյան, Ուրարտական համայնական և զինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
49 УКН, №№155, Е, стк. 7, 47; 164, стк. 10; 165, стк. 10; 172, стк. 8; 278, стк. 11; 280, стк. 14; 417, стк. 10; 418, стк. 11; 446, стк. 8.
50 УКН, №286, лиц. стор., стк. 15.
51 Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիլի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167:
52 Դ.Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 167: